սիրոյ. զի մեք խնայելով ի միմեանս, նայեցեալ յաստուածեղէն վարդապետն, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի՛ միմեանց վնասել իշխեսցուք: *33* Իսկ եթէ դու ի քո եղբայր եւ ի ծառայակիցն եւ յընկերակիցն եւ ի հարազատն ոչ խնայեսցես, որ կամաւքն եղբայրացեալ է մեզ Տէրն՝ ի քեզ ոչ խնայեսցէ: *34* Զի նա մեզ այսպէս ասաց. *Որ ձեզ լսէ, ինձ լսէ. եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ զձեզ անարգէ, զիս անարգէ*[ա]: *35* Եւ որ այժմ դեռ մեւք[1] ընդ քեզ խաւսի, լո՛ւր Քրիստոսի, զի մի՛ կորիցես դու. գուցէ անկեալ ի թագաւորութենէդ քումմէ, կենդանւոյն միայն շրջիցիս, եւ ոչ ոք քեզ աւգնիցէ: *36* Այլ այժմ լո՛ւր Քրիստոսի, եւ խնայեա յանձն քո, մի՛ հեղուլ զարիւն եղբաւր քո հարազատի՝ սպանանել զարդարն ի տարապարտուց յանխնայ:

37 Իսկ թագաւորն սալացեալ[2], ոչ ինչ լսէր. զերեսսն վտաւատաւքն ծածկեալ՝ ոչ բանայր, եւ ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ի գահոյսն, զի եւ շարժել անգամ ոչ տղէր: *38* Իսկ մինչ դեռ նա զայս եւ այսպիսի բանս ողոքոյ[3] ընդ թագաւորին խաւսէր, գայր արտաքուստ դահճապետն Երազմակ, մտանէր ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զամենայն զիրամանս արքունի. առի գնացի զԳնէլ, տարայ մինչեւ յորմ Սիւսին[4] սպանի, եւ անդէն թաղեցի:

39 Ապա խաւսել սկսանէր սուրբն Ներսէս, եւ ասէր. Արդարեւ իսկ իբրեւ աւձի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի ճարտարի, եւ մի՛ առցէ զդեղ ի դեղատուէ իմաստնոյ, սոյն աւրինակ եւ դու խցեր զականջս, եւ կափուցեր զլսելիս, զի մի՛ լուիցես զաւգտակարս բարբառոց զաստուածեղէն բանիցն խրատուն. այլ զգազանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ: *40* Վասն այնորիկ որ ի վերայ նոցա ասացաւ, լիցի այն ի վերայ քո, որպէս ասէն. *Աստուած փշրեսցէ կատամունս նոցա ի բերանս նոցա, եւ զժանիս առիւծուց խորտակեաց Տէր*[ա]: *41* Վասն զի ընդդէմ դարձար հրամանին Քրիստոսի Տեառն քո, վասն այնորիկ անարգ լիջիր դու իբրեւ զջուր հեղեալ. եւ ի լարել աղեղան սորա՝ տկարասջիր: *42* Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց զյետին բաժակն, արբջիք արբեսջիք եւ կործանեսջիք, եւ այլ մի՛ եւս կանգնեսջիք: *43* Եւ անսպառ ժամանակին հրոյն սպառնալիք հասանիցեն ձեզ ի Տեառնն գալստեանն. եւ անկջիք ի խաւարն, եւ մի՛ եւս տեսջիք զարեւ փառաց Որդւոյն

ա Հմմտ. Ղուկ. Ժ 16:

1 *Օրինակ մի՝* որ յարաժամ մեւք

2 *Օրինակ մի յաւելու՝* քարացեալ

3 *Օրինակ մի՝* ողոքելոյ

4 *Օրինակ մի՝* Նիւսին

ա Սաղմ. ԾԷ 7